

Վ. Հակոբյան

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՅՍԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջերս Մատենադարանի № 1780 ձեռագիրը՝ նայելիս, այնտեղ մեղ հանդիպեց այդեղործության և այլ հարցերի վերաբերյալ չորս փոքրիկ հատվածներ։ Այդ հատվածներից երկուսը վերաբերում է մի քանի պտղատու ծառերի մշակման այնպիսի մեթոդների նկարագրությանը, որոնց կիրառման դեպքում, կարող ենք ստանալ պտուղների նոր տեսակներ։ Իսկ մնացած երկու վկայությունը վերաբերում են այլ հարցերի, որոնք նույնպես հետաքրքիր են։

Առաջին վկայությունը վերաբերում է խաղողի, դեղձի, ծիրանի անկորիղ տեսակներ ստանալու մշակման եղանակին, այդ մասին այնտեղ կարդում ենք.

«Թէ կամիցես բերել տալ այնպիսի պտուղների, որ բնաւ կուտ չունենայ, որպէս խաղողն, շաֆթալուն, մուշմուշն և այլ, այսպիսիքն, նախ տնկեալ ծառերն, ևս առաւել խաղողին տունկն, ձուղերն որ ունենայ այդ ձուղերն դատէ և միջի եղեալ ծուծն հանէ և կրկին միաւորէ և տեղ մի այլ տնկէ, որ անպատճառ լինայ խաղող առանց կուտ և եմպիշ առանց ոսկոր» (էջ 301ա)։

Երկրորդ վկայությունը վերաբերում է խաղողի մշակման այնպիսի եղանակին, որի կիրառման հետևանքով միևնույն վաղի վրա կարող ենք ստանալ մի քանի դույնի (իմա՝ տեսակներ) խաղող, օրինակ՝ սև, կարմիր, սպիտակ, կանաչ։ Ահա համապատասխան վկայությունը.

«Նոյնպէս թէ կամիցես ի մէկ տունկն ցեղուցեղ խաղող ունենալ, նա այսպէս արայ, նախ ժողովլ սպիտակ և սև խաղողին ունդերն և դիր ի տունկին ծուծին եղեալ տեղիքն ի տակն, նա անպատճառ լինայ խաղող սև, կարմիր, սպիտակ և կանաժ, որ բանն է առաւել փորձեալ ի ֆրանկաց տունն» (էջ 301ա)։

1 Մատենադարանի № 1780 ձեռագիրը ժամանակագրական, աշխարհագրական և տրեգերագրական նյութերի ժողովածու է։ Ժողովածուի առաջին մասը՝ 1-300 էջերը, ֆրանսերենից հայերեն թարգմանել է հոհան Լստանոսյան (Ճառկաստանում) 1617 թ. (էջ 17 ա, 80 ա)։ Ժողովածուի առաջին մասի զրիչն ինչոր թարգմանիչն է։ Թարգմանությունից հետո ժողովածուի 300ր-301ր էջերում գտնվում են վերոհիշյալ չորս հատվածները, որոնք կապ չունեն թարգմանված նյութերի հետ, չնայած զրանք ժողովածուի մեջ բնագրի նակել է թարգմանիչի։

2 Վերոհիշյալ վկայությունները, կամ նման բան չգտանք «Գիրք վաստակոց»-ի մեջ (Վենետիկ, 1877)։ Այնտեղ առհասարակ պտուղների նոր տեսակներ ստանալու ոչ մի վկայություն չենք գտնում։ Հակառակ սրան, այնտեղ գտնում ենք մի շարք բույսերի մշակման նկարագրություններ, որոնք վերցված են պրակտիկայից, օրինակ, «Բաղազս Ոսպան» գուռն ԻՄ, էջ 20, «Բաղազս Ուսուան» գուռն ԻԲ, էջ 20, «Վասն կորեկի» գուռն ԻԴ, էջ 21 և այլն և այլն։

Վերոհիշյալ երկու վկայությունները հետաքրքիր են մի քանի տեսակետից: Նախ այդ վկայությունները ոչ թե վերացական, կամ անորոշ հաղորդումներ են, այլ կոնկրետ փորձից հանած եղրակապություններ: Այդ և ասում երկրորդ վկայության վերջին մասը՝ «որ բանն է առաւել փորձեալ ի ֆռանկաց տունն»:

Երկրորդ՝ այստեղ գործ ունենք կուլտուրական բույսերի մշակման սելեկցիոն առանձին փորձերի և դրանցից բխած կոնկրետ եղրակապությունների հետ: Այս առումով հետաքրքիր է առաջին վկայության սկզբնական հատվածը. «Թէ կամիցես բերել տալ այնպիսի պտուղների, որ բնաւ կուտ չունենայ...»:

Սույն հատվածը ցույց է տալիս, որ մարդիկ հնում ևս գիտակցել են, որ մշակողը կարող է «բերել տալ», այսինքն՝ ստանալ լավագույն տեսակի պտուղներ, որոնք բնական՝ անմշակ աճեցման հետեանքով չեն ստացվում:

Ժիշտ է, այս վկայությունները պրակտիկ եղրակապություններ են, առանց գիտական խորը և լուրջ ընդհանրացումների, սակայն հպեաք է մոռանալ, որ այդ չենք կարող պահանջել վերոհիշյալ վկայությունների հեղինակից, որը 16-րդ դարի վերջի և 17-րդ դարի սկզբի անձնավորություն է: Բայց այն հանգամանքը, որ հնում ևս մարդու որոնող միտքը բույսերի մշակման սովորական եղանակով չբավարարվելով և որոնումների միջոցով գտնելով բույսի մշակման նոր ձև, եկել է այն եղրակապության, թե մարդ կարող է բույսի մշակման եղանակը փոխելով նրանից նոր տեսակի պտուղներ ստանալ, այդ եղրակապությունը պատմականորեն տեսական մեծ արժեք կարող է ունենալ, մասնավորապես բույսերի սելեկցիայի պատմության ուսումնասիրության առնչությամբ:

Երրորդ վկայությունը նույնպես գործնական նշանակություն կարող է ունենալ, այն վերաբերում է այն միջոցառումների նկարագրությանը, թե ինչպես մի շարք մրգեր կարելի է մեկ տարի պահել առանց կորցնելու նրանց թարմությունը և իսկական համը: Ահա համապատասխան վկայությունը. «Թէ կամիցես պահել ձմերուկ և սեղ, տանձ, խնձոր, որ կենայ անապական մինչև տարին կատարեալ, որ լինել համեղ ուտելու, նա այսպէս արայ՝ նախ առ ղիսադողն և բաղում օր ի շուքն պարկեցուր և յետոյ սև ձուրթով զկոթին ծայրերն փակցու իրր կոճակ, անցուցեալ ի սուր փայտի մի և այդպէս կախ կենայ մի պաղ տեղիքն, որ անպատճառ կենայ և ղիմանայ ի բոլոր տարին»:

Եւ թէ կամիս գձմերուկն և դսեղն պահել, նա այսպէս արայ, առ դասացեալքն և ղիր ի մէջ անուշ շիրային, որ պառկի մինչև գիշեր մի: Եւ ասպա պարտ է, որ շիրան լինայ քաղցր և առաւել նոր, քանղի թէ ոչ լինայ այդպէս, նա հանապաղ գինու հոտ կուեննայ: Եւ յետոյ հան այս շիրային մէջէն, պահէ պաղ տեղիք մի օր կենայ, անպատճառ բոլոր տարին երթայ (էջ 301 ր):

Ի դեպ, «Գիրք վաստակոց»-ում գտնվում է խնձոր, թուղ և այլ մրգեր (բայց ոչ ձմերուկ, խաղող) պահելու մի քանի այլ եղանակ՝ օրինակ. այնտեղ նշված է խնձոր պահելու հինգ տարբեր եղանակ,¹ բայց առա-

¹ «Գիրք վաստակոց» դուռն ՄԺՁ «Վասն խնձորի պահելոյ» էջ 134: Բերում ենք հեղինակի նշած մի քանի եղանակից առաջինը՝ «Քաղեա ձեռոքո, և ի տուն, ուր ծուխ չհասանի՝ զարէ յարդ լից, և ինչն ի վերայ ամրողջ մեայ. քանի առնն հով լինի լաւն այն է» (նույն տեղ, էջ 134):

ջարկվող և դանակը այնտեղ չենք գտնում: Չորրորդ վկայությունը նույնպես բավական հետաքրքիր է և վերաբերում է տեխնիկայի պատմությանը: Հարցը վերաբերում է այնպիսի հարմարանք պատրաստելուն, որը մարդու ոտքերին ամրացնելուց հետո, նա կարող է անփսաս քայլել դետերի և կանգնած ջրերի վրայով: Ահա համապատասխան վկայություն:

«Որտեղ վասն ջրին վերայ քայլելու, նախ թէ կամիցես գետ մի անցանել որ ի վերայ քայլես իբր հողի վերայ, առանց դժբերության և թացուելով, որ ոտք չոր ելանես նայ այսպէս արայ. կամ գտիր կամ շինել տուր երկուս զալպուրնի, որ փայտն լինի առաւել հաստ և ամուր. ի ներքեն դիր ծակ-ծակ կաշին տեղն անարատ կաշի մի, որ ջուրն բնաւ ոչ անցանէ ի ներսին կողմն, որպէս ի լուսանց երևի: Եւ յետոյ այդ երկուս զալպուրնին դիր ի ոտից տակն, այնպէս ամուր կապելով, որ ոչ խաղաղայ ի ոտից ներքեւ: Եւ երկար մղրախ մի ի ձեռք առնելով, ստուգապէս քայլես ի վերայ ջրին և պարիպանկղար գետերն անցանիս ոչ ինչ փսաս առնելով: Եւ դորա պատճառն իբր լինի, որ այն յաւզն, որ ի մէջ զալպուրնին կոյ, ոչ թողու որ ի տակն իջանէ: Եւ մղրախն կամ մղրախի նման երկար փայտն ոչ թողու դայ, այլ վասն ծանրութեան իւր անձն առնուլ և այս ի բաղում տեղիս փորձեալ եմք վասն կեանքիտնին անցանելու: Ապա թէ ջուրն լինայ սակաւ խորին, նա ստուգապէս, այլ հանգիստարար երթվի կամ թէ ջուրն կանգնուլ լինայ այլ ուղիղ երթաս» (էջ 300 ր):

Վերահիշյալ վկայությունը հետաքրքիր է այն տեսակետից, որ նըշված հարմարանքի կառուցվածքը նկարագրելուց բացի, հեղինակը տալիս է գիտական պատշաճ բացատրություն. «...Եւ դորա պատճառն իբր լինի, որ այն յաւզն, որ ի մէջ զալպուրնին կայ ոչ թողու որ ի տակն իջանէ և մղրախն կամ մղրախի նման երկար փայտն ոչ թողու դայ, այլ վասն ծանրութեան իւր անձն առնելու...»:

Ընչպես տեսնում ենք, բնական ուժերը կամ աղոթքները և այլ սնոտիապաշտական պատկերացումները այստեղ բացակայում են: Այսպիսի վկայությունները, որոնք հարկավ եզակի չեն Մատենադարանի ձեռագրերում, պետք է համապատասխան մասնագետների հետաքրքրության առարկան դառնան: